ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1371-Ա/2 «23» օգոստոսի, 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ - ՀՀԲՀՀ - 2021» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 7-ի N 20-Լ հրամանի հավելվածի 4-րդ գլխի 18-րդ մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի փետրվարի 15-ի N 165-Ա/2 հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2021 թվականի օգոստոսի 11-ի N 2 արձանագրությունը և ՀՀ գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի կողմից 2021 թվականի օգոստոսի 17-ին համաձայնեցված ցանկը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հաստատել մրցութային կարգով ընտրված գիտական ծրագրերի ցանկը՝ համաձայն Հավելվածի:

2. Գիտական ծրագրերի ֆինանսավորումը սկսել 2021 թվականի սեպտեմբերից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

Նախարար՝ ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2021 թ. օգոստոսի 23-ի N 1371-Ա/2 հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ - ՀՀԲՀՀ - 2021» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՑԱՆԿ

Հ/հ	Ծածկագիր	Ծրագրի անվանում	Ղեկավար	Գիտական կազմակերպություն
1	21SC-BRFFR-1C002	Էրբիումի իոններով իտրիումի ալյումինատի սինթեզումը և սպեկտրալ-լյումինեսցենտային ու լազերային հատկությունների հետազոտումը 1.6 մկմ սպեկտրալ տիրույթի լազերների համար	Դերձյան Մարինա Վազգենի	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
2	21SC-BRFFR-1C003	Cu2Sn(S,Se)3 թաղանթների երկքայլանի սինթեզ և հետազոտում որպես բարակ-թաղանթային արեգակնային տարրերի համար ֆոտոակտիվ շերտ	Պետրոսյան Ստեփան Գրիգորի	ՀՀ ԳԱԱ «Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ
3	21SC-BRFFR-2H006	Ջրի մակարդակը որպես լճերի էկոհամակարգերի ջրի որակի երկարաժամկետ դինամիկայի և հիդրոէկոլոգիական ցուցանիշների փոփոխությունների կարևոր գործոն	Բաբայան Գայանե Հրանտի	ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ

4	21SC-BRFFR-1F007	Ֆոլաթթվի և կատիոնային պորֆիրինների հիմքով նոր վեկտորային կոմպոզիտներ ուռուցքների ֆոտոդինամիկ թերապիայի համար	Սեֆերյան Թորգոմ Երվանդի	ՀՀ ԳԱԱ «Հ.Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ
5	21SC-BRFFR-1B009	Եղանակային երևույթների փոփոխություններ և օդի աղտոտվածության կանխատեսման համար հեռազննման տվյալների մշակման մեթոդներ՝ օգտագործելով նեյրոնային ցանցեր և խորը ուսուցում	Ասցատրյան Հրաչյա Վոլոդյայի	ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ
6	21SC-BRFFR-1F012	Ֆիզիոլոգիական և կենսաքիմիական վերլուծության, թվային ֆենոտիպավորման և բջիջների ընտրության միջոցով Chlorellaceae միկրոջրիմուռների բելառուսական և հայկական շտամների աճման բնութագրերի ու H2-ի արտադրման ակտիվության ուսումնասիրություն և օպտիմալացում	Գաբրիելյան Լիլիթ Սերգեյի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
7	21SC-BRFFR-1F013	Կլիմայի փոփոխության ազդեցությունը Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի ողնաշարվոր կենդանիների տարածման վրա անցյալում և ներկայում	Առաքելյան Մարինե Սեմյոնի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
8	21SC-BRFFR-6C018	Հայաստանում և Բելառուսում բարձրագույն կրթության համակարգերի մրցունակությունը Covid-19 համաճարակի հետ կապված թվայնացման գործընթացների արագացման համատեքստում	Ավետիսյան Պարգև Սերգեյի	Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան ԲՄԿ ՊՈՒՀ
9	21SC-BRFFR-1F020	Քաղցկեղների համալիր կենսամարկերների որոշման և ֆենոտիպերի դասակարգման մեթոդների մշակումը կենսաբանական ուղիների և բարձր թողունակության տվյալների հիման վրա	Առաքելյան Արսեն Արտաշեսի	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ

10	21SC-BRFFR1C021	Մեծ սպին և ներքին կառուցվածք ունեցող տարրական մասնիկներն արտաքին էլեկտրամագնիսական և գրավիտացիոն դաշտերում	Իշխանյան Արթուր Միքայելի	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
11	21SC-BRFFR-1D022	Սուբստրատների քիմիական սինթեզ և սուր երիկամային անբավարարության վաղ լաբորատոր ախտորոշման նպատակով կենսաբանական հեղուկներում պանտետեինազի ակտիվության որոշման նոր մեթոդի մշակում:	Մկրտչյան Աննա Ֆելիքսի	ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ
12	21SC-BRFFR-4A025	Ալգինատ-Ag հիդրոզոլների սինթեզը և դրանց հիման վրա նոր հակաբիոտիկների հետ միացության ձևավորում ՝ ձկների հիվանդությունների կանխարգելման և բուժման համար	Գրիգորյան Կարինե Մարտինի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
13	21SC-BRFFR-1F026	Օքսիդավերականգնողական ֆերմենտների և սիդերոֆիլային նանոմասնիկների համալիրների դերը՝ կենսավառելիքային սարքերի էլեկտրոդների էլեկտրակատալիզային գործընթացների բարելավվման մեջ	Փոլադյան Աննա Արշակի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
14	21SC-BRFFR-1F028	Կլիմայի գլոբալ տաքացման ազդեցությունը հարթավայրային և լեռնային լիմնոհամակարգերի կենսաբազմազանության վրա՝ Բելառուսի և Հայաստանի օրինակով	Գաբրիելյան Բարդուխ Կառլենի	ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ
15	21SC-BRFFR-1B029	Ճանաչողության բազմամակարդակ մոդելներ օպտիմալ լուծումների դինամիկ որոնման խնդիրներում	Սահակյան Հասմիկ Արտեմի	ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ
16	21SC-BRFFR-4D032	Մելանինոգեն շտամերի և մանրէային մելանինի կիրառումը բույսերի վնաստուների ու հիվանդությունների դեմ պայքարում, ինչպես նաև բերքատվության բարձրացման համար:	Ավետիսյան Սոնա Ոսկանի	ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ